

Նելլի Սարգսյան
*Բանասիրության մագիստրոս,
Երևանի պետական համալսարանի ասպիրանտ
Էլ. փոստ՝ nelly.sargsyan@ysu.am,*

DOI: 10.53614/18294952-2025.1-159

**ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ
(ԱՆԴՐԱԴԱՐՁ Զ. ԼՈՆԴՈՆԻ «ՋՍՊԱՇԱՊԻԿ» ՎԵՊԻՆ)**

Փոխաբերությունների ուսումնասիրությունը մշտապես մեծ հետաքրքրություն է առաջացրել ինչպես բազում լեզվաբանների այնպես էլ այլ գիտությունների հետազոտողների մոտ: Իրենց բարդ իմաստաբանական կառուցվածքով փոխաբերությունները միտված են ոչ միայն ստեղծագործության պատկերավոր լեզուն և ոճը առավել հագեցնելուն, այլև մտածողությունն արտահայտող տարրեր են, որոնց միջոցով հնարավոր է դառնում հետազոտել հեղինակի գրելաոճը: Սույն հոդվածում ուսումնասիրվում են փոխաբերության մի շարք տեսություններ, փորձ է արվում գնահատելու դրանց նշանակությունը գեղարվեստական ստեղծագործության կառուցվածքի մեջ, ինչպես նաև քննության առնելու դրանց թարգմանության տարաբնույթ մոտեցումներ և մշակելու համապատասխան մեթոդաբանություն: Հետազոտության նյութն են Ջեյ Լոնդոնի «Ջսպաշապիկ» վեպից վերցրած փոխաբերական իմաստ կրող զանազան օրինակներ և դրանց հայերեն համարժեքները երկի հայերեն թարգմանության մեջ, որոնց քննությունը փաստում է փոխաբերությունների հաջողված թարգմանության և թարգմանչի կիրառած մեթոդաբանության սերտ կապը: Սրա դերը չափազանց կարևոր է ստեղծագործության բնագիր տեքստի ինչպես առանձին մասերի, այնպես էլ ընդհանուր իմաստի փոխանցման գործընթացում:

Հիմնաբառեր՝ փոխաբերություն, թարգմանություն, ճանաչողաբանություն, թիրախ-լեզու, աղբյուր-լեզու, հեղինակ, թարգմանիչ, տեքստ:

Ներածություն

Գեղարվեստական ստեղծագործության լեզուն առանձնանում է դրանում առկա բազմիմաստ լեզվական միավորներով, որոնց շնորհիվ հեղինակին հաջողվում է «պատկերել» իր ներաշխարհը: Նմանատիպ միավորներից են փոխաբերությունները, որոնց միջոցով կարելի է անուղղակի կերպով արտահայտել բարդ հասկացության կերտվածք ունեցող երևույթներ: Եթե փոխաբերությունների միջոցով հեղինակը կարող է արտահայտել իր պատկերավոր մտածողությունը, ապա արդյո՞ք հնարավոր կլինի նաև դրանց կառուցվածքն ուսումնասիրելով ներթափանցել հեղինակի մտածելակերպի մեջ և հասկանալ ստեղծագործության ընդհանուր նպատակը: Տվյալ աշխատանքը միտված է քննարկելու այս դրույթը և հետազոտելու այն ոչ միայն գրականագիտական հիմնախնդիրների լուծումներ գտնելու նպատակով, այլև այդ ամենն իրականացնելու թարգմանաբանության բնագավառում ևս՝ համեմատական քննության ենթարկելով բնագիր և թիրախ տեքստերը: Հետազոտության նյութը Զեկ Լոնդոնի «Զսպաշապիկ» վեպն է և դրա համապատասխան հայերեն թարգմանությունը՝ իրականացված Կ. Միմոնյանի կողմից:

Աշխատանքում քննարկված են Զ. Լակոֆֆի, Մ. Զոնտնի, Ն. Մանդելբլիթի, Է. Սեմինոյի, Զ. Ստինի, Ա. Դորստի, Ս. Գասպարյանի և այլոց տեսություններն ու մոտեցումները:

Մեթոդը

Հոդվածում կիրառված մեթոդաբանության հիմքում են ընկած փոխաբերությունների ուսումնասիրության նվիրված մի շարք տեսությունների համակարգում, համեմատություն և վերլուծություն: Աշխատանքի տեսական բաղադրամասի գործնական կիրառության և փորձարկման նպատակով իրականացված է Զեկ Լոնդոնի «Զսպաշապիկ» վեպից դուրսբերված բնագիր տեքստի և համապատասխան հայերեն թարգմանության փոխաբերությունների զուգադրում, համեմատում և վերլուծություն:

Արդյունքներ և քննարկում

Աշխատանքի հետազոտության իրականացման շնորհիվ հայտնաբերվել է, որ փոխաբերությունների թարգմանության համար անհրաժեշտ է համակարգել հստակ քայլեր և ձևավորել մեթոդ, որը թույլ կտա հնարավորինս ճշգրիտ փոխանցել հեղինակի մտադրությունը՝ բնագրում այս կամ այն փոխաբերության կիրառելիս: Նշված մեթոդի հիմքում ընկած է փոխաբերությունների հասկացության էության և թարգմանության ճանաչողական հայեցակերպի հետ կապված տեսությունների կիրառումը: Հետազոտության նյութի վերլուծության արդյունքում վերոնշյալ մեթոդը բազմիցս դուրս է բեր-

վել և հստակեցվել է թե՛ բնագրում, թե՛ թարգմանության տեքստերում:

Սույն հոդվածում սահմանված փոխաբերությունների թարգմանության ինտեգրացված մեթոդը միտված է բացահայտելու բնագիր տեքստի փոխաբերությունների հասկացության հայեցակերպը, որի շնորհիվ թարգմանիչը պատկերացում է կազմում դրա բարդ իմաստային կառուցվածքի վերաբերյալ, ինչպես նաև տեքստի հերմենևտիկ ուսումնասիրության միջոցով հստակեցնելու հետազոտվող փոխաբերությունների համատեքստային իմաստը և այդ ամենի փոխանցումը թարգմանության մեջ: Այս աշխատանքը նորովի է դիտում թարգմանության բարդ հիմնահարցերից մեկը, այն է՝ «անթարգմանելի» լեզվական միավորների՝ փոխաբերությունների, թարգմանությունը: Հետազոտության արդյունքում սահմանած մեթոդի հենասյունն են ձանաչողական լեզվառճաբանության սկզբունքները, ինչպես նաև հերմենևտիկ և իմաստաբանական վերլուծության եղանակները, որոնց ինտեգրման միջոցով հնարավոր է դառնում գեղարվեստական երկի ամբողջական և հստակ միջլեզվական թարգմանության իրականացումը:

Տեքստում փոխաբերությունների հայտնաբերման գործընթացը

Գեղարվեստական ստեղծագործության տեքստի առանձնահատկությունն է տեքստի հագեցվածությունը այլաբերական ու դարձյալային տարաբնույթ տարրերով: Դրանց շարքում առանձնակի ուշադրություն է գրավում փոխաբերությունը, որը, բառիմաստի անուղղակի արտահայտման միջոց լինելով, թույլ է տալիս մի նշանակությունը փոխարինել մեկ ուրիշով՝ ըստ հարանմանության սկզբունքի: Փոխաբերությունների գործածումը տեքստում ոչ միայն տեքստն օժտում է իմաստային և լեզվառճական հագեցվածությամբ, այլև հնարավորություն է տալիս հեղինակին փոխաբերության շնորհիվ արտացոլել իր ներքին պատկերավոր աշխարհն ու մտածելակերպը: Այդ յուրահատկության շնորհիվ հեղինակը կարողանում է հասնել իր երկին հատուկ գեղարվեստական ներագդման, որն էլ տվյալ ստեղծագործության յուրօրինակության կայացման կարևոր պայմաններից է:

Գրական երկերի լեզվառճական առանձնահատկությունների ուսումնասիրության համար, մասնավորապես փոխաբերությունների հայտնաբերման նպատակով կիրառվում է Pragglejaz Group-ի 2007 թ. մշակած «Փոխաբերությունների հայտնաբերման գործընթաց (ՓՀԳ)»-ի (Metaphor Identification Procedure: MIP) մեթոդաբանությունը, ընդ որում՝ խմբում ներառված են եղել մի շարք անվանի լեզվաբաններ, մասնավորապես՝ Պիտեր Կրիսպը, Ռեյ Գիբբսը, Ալան Չենկին, Գրեհեմ Լոուն, Ջերարդ Սոինը, Լինն Կեմերոնը, Էլենա Սեմինոն, Ջո Գրեյդին, Ալիս Դայգենը և Զոլտան Կյովեչեշը: Փոխաբերությունների հայտնաբերման գործընթացի հիմնական գաղափարը փոխաբերական իմաստ պարունակող լեզվական միավորների իմաստաբանական հետազոտության մեջ է՝ համատեքստային իմաստի հաշվառմամբ: Մեթոդաբանությունը ենթադրում է ընթերցողի կողմից ամբողջական տեքստին ծանոթանալուց մինչև համատեքստային առանձնակի իմաստներ արտահայտող բառերի՝ իրենց հիմնական իմաստի հետ համեմատման, և ապա փոխաբե-

րությունների առանձնացման իրականացում: Առավել ճշգրիտ՝ փոխաբերությունների հայտնաբերման գործընթացի մեթոդաբանությունը քննարկվող ողջ տեքստի ընդհանուր ընթերցման, բառիմաստային միավորների առանձնացման, դրանց հիմնական և համատեքստային իմաստների սահմանման մեջ է: Այս ձանապարհով են տարանջատվում այն միավորները, որոնց համատեքստային և հիմնական իմաստները դիտարկվող իրադրության մեջ ակնհայտորեն տարբերվում են, սակայն համատեքստային իմաստն ընկալելի է դառնում հիմնական իմաստի հետ համեմատվելու արդյունքում: Այս պարագայում նմանատիպ համատեքստային իմաստ պարունակող միավորը համարվում է փոխաբերություն (Pragglejaz group, 2007, էջ 3):

Վերոնշյալ մեթոդաբանությունը լրամշակել ու առավել ընդլայնել են Ամստերդամի ազատ համալսարանի գիտնականները (Metaphor Identification Procedure, Vrije Universiteit, MIPVU), որի արդյունքում կարևորվել են փոխաբերության՝ ոչ միայն անուղղակի, այլև ուղղակի իմաստ պարունակող լեզվական տարրերը (օրինակ՝ համեմատությամբ կամ ոչ բառացի համանմանությամբ, բառիմաստային-քերականական փոխարինմամբ, զեղջմամբ)¹ (Steen, Dorst, Herrmann, Kaal, Krennmayr, 2010):

Համաձայն Զ. Ստինի՝ գրական տեքստերում ներկայացվող փոխաբերությունները “կանխատեսված” բնույթ են կրում, այսինքն՝ համընդհանուր չեն և այսպիսով ընթերցողի համար հաճախ՝ ոչ լիովին ընկալելի, որն էլ մեկնաբանման դժվարություն է առաջացնում: Այսօրինակ դեպքերում մեկնաբանությունը հնարավոր է դառնում, երբ փորձ է արվում փոխաբերական իմաստ կրող բառիմաստային միավորն արտահայտել այլաբերական հնարների միջոցով: Գրական տեքստերում փոխաբերությունների հնարավոր լիակատար ընկալման համար մեկնաբանության անհրաժեշտության գաղափարը բացատրում է տվյալ ժանրում արտահայտված փոխաբերության էությունը, որն անբալկտելիորեն կապված է հեղինակային ստեղծագործ մտքի,

1 Վերոնշյալ մեթոդաբանությունների հիման վրա գրական տեքստերում փոխաբերությունների հաճախականության վերաբերյալ հետաքրքրության արժանի հետազոտություն է իրականացրել Ա. Գ. Դորստը (Լեյդենի համալսարան): Վերոնշյալ հետազոտությունը քննության է առնում գրական ժանրի տեքստերում և ակադեմիական բնագավառում, մամուլում ու տարաբնույթ զրույցներում փոխաբերությունների և նմանատիպ փոխաբերական իմաստներ արտահայտող բառերի կիրառման հաճախականությունը և որոշակի համեմատություն անցկացնում դրանց միջև: Տվյալ հետազոտության արդյունքում հայտնաբերված փոխաբերական իմաստներ արտահայտող բառերը դասակարգվել են ըստ Փոխաբերությունների հայտնաբերման ամստերդամյան լրամշակված տարբերակի (MIPVU)՝ որպես փոխաբերության (ա) առնչվող, (բ) չառնչվող և սահմանային կարգավիճակ ունեցող փոխաբերություններ: Փոխաբերությունների օրինակները քաղվել են հայտնի միլիոն բառ պարունակող British National Corpus-ի BNC-Baby շտեմարանից, որը պարունակում է 4 միլիոն բառ, և պատահականության սկզբունքով ընտրվել է 12 հատված 12 վեպերից: (Pragglejaz Group, «MIP: A Method for Identifying Metaphorically Used Words in Discourse», էջ 15) Հետազոտման արդյունքում հայտնաբերվել է, որ գրական տեքստերում անուղղակի փոխաբերությունների հաճախականությունը իր տոկոսային հարաբերակցությամբ զիջում է ակադեմիական և մեդիա տեքստերում հանդիպող փոխաբերությունների հաճախականությանը (ակադեմիական տեքստերում՝ 18,2 %, լրատվական տեքստերում՝ 16,0 %, գրական տեքստերում՝ 11,4 % և զրույցներում՝ 7,6%): Այսուհանդերձ, հարկ է նշել, որ ուղղակի փոխաբերությունների ամենամեծ հաճախականություն ունեցող տեքստերը պատկանում են գրական ոճին (49,1%), այնուհետև՝ մեդիա տեքստերին (33,3 %), որոնց հաջորդում են ակադեմիական տեքստերը (11,9%): Ուղղակի փոխաբերությունների նվազագույն հաճախականությամբ առանձնանում են զրույցի օրինակները (5, 7%): (Pragglejaz Group, 2007, էջ 17):

յուրօրինակ գրելաձևի և աշխարհընկալման հետ և պայմանավորված է դրանցով (Pragglejaz group, 2007):

Փոխաբերությունների ճանաչողական հայեցակերպը և դրանց թարգմանության առանձնահատկությունները

Քանի որ փոխաբերությունները բազմաշերտ իմաստակիր միավորներ են, դրանք, ըստ էության, կարևոր դեր են կատարում մարդու հասկացական համակարգում հասկացությունների ինչպես սահմանման, այնպես էլ դասակարգման գործընթացում: Այս հատկության շնորհիվ է, որ փոխաբերությունները կարևոր դեր ունեն մարդու ճանաչողության ուսումնասիրության հիմնահարցում: Հատկանշական է նաև այն, որ առաջին հերթին հենց փոխաբերություններով է դրսևորվում ստեղծագործական մտածելակերպը: Այդ իսկ պատճառով գրական-գեղարվեստական ժանրի հեղինակները հաճախ են դիմում դրանց օգնությանը:

Ջարմանալի չէ, հետևաբար, որ գեղարվեստական ստեղծագործության կիրառվող փոխաբերությունների բարդ բնույթը ուսումնասիրելով՝ բանասեր-ընթերցողը կարողանում է ըմբռնել հեղինակի ներաշխարհից բխող բազում դրսևորումներ, որն էլ նրան տանում է դեպի ողջ երկի հասկացում:

Այս հետևությունը էապես կարևոր նշանակություն ունի նաև գրական երկի թարգմանչի համար, քանզի հայտնի է, որ փոխաբերությունը հեղինակային ստեղծագործականության արտահայտման իր յուրահատկությամբ կարող է որոշակի դժվարություն ստեղծել ճշգրիտ համարժեքի հայտնաբերման գործընթացում: Հասկանալի է, իհարկե, որ առաջին քայլն այս գործընթացում բնագիր տեքստի իմաստային կառուցվածքի ամբողջական ըմբռնումն է, որից հետո միայն կարելի է թիրախ-լեզվում փնտրել փոխաբերության համարժեք տարրերակը:

Այս գործընթացն իրականացնելու համար պարտադիր պայման է թարգմանչի՝ աղբյուր-լեզվի և թիրախ-լեզվի կատարյալ իմացությունը, ինչպես նաև դրանց ազգային, սոցիալ-մշակութային բաղադրյալների լիարժեք իմացությունը: Այս պահանջը կարևոր նշանակություն ունի հատկապես գրական տեքստերի թարգմանության պարագայում, որոնց դեպքում թարգմանչի խնդիրն է դառնում աղբյուր-տեքստի լեզվական միավորները հնարամտորեն փոխանցել թիրախ-տեքստ: Այդ իսկ պատճառով է, որ թարգմանությունը հաճախ դիտվում է որպես աղբյուր-տեքստի՝ թիրախ-լեզվով վերաստեղծում: Այդ կապակցությամբ կարևորվում է Ս. Գասպարյանի առաջադրած հիպոթեզն առ այն, որ թարգմանությունը մեկնաբանվում է որպես փոխաբերական տեղաշարժ: Ինչպես նշում է Ս. Գասպարյանը, թարգմանիչը, լուծելով աղբյուր-տեքստի տարրերի համարժեքները թիրախ-տեքստ փոխանցելու խնդիրը, հատկապես կարևորելով ազգային մտածողության բնորոշ յուրահատկությունների վերարտադրությունը համապատասխան իմաստային երանգներով, դիմում է փոխաբերական տեղաշարժի մեթոդին, որի հիմքում աղբյուր և թիրախ լեզվական միավորների հարաբերակցությունն է (Gasparyan, 2021, էջ 37):

Փոխաբերությունների՝ հեղինակի յուրահատուկ մտածելակերպն արտահայտելու առանձնահատկությունը առաջացնում է դրանց թարգմանության հատուկ մեթոդաբանության պահանջ: Փոխաբերության թարգմանությունը ենթադրում է ստեղծագործության գեղարվեստականության ապահովման հարցում որոշիչ դեր կատարող լեզվաոճական այդ հնարի հասկացության հայտնաբերման և թիրախ-տեքստում հնարավորինս ձգճիտ համարժեքների ընտրության գնահատում: Փոխաբերություններ թարգմանելիս չի կարող անտեսվել նաև դրա բովանդակության, հիմքում ընկած կենսափորձի և իմաստային մտազուգորդումների միջև առկա փոխազդեցությունը: Տվյալ խնդիրն ուղղված է փոխաբերության «թարգմանելիության» մեթոդաբանության մշակմանը (Dagut, 1976, էջ 22–31):

Լստ Զ. Լակոֆի և Մ. Ջոնսոնի հասկացության փոխաբերության տեսության՝ հասկացության տիրույթների ձևավորման մեջ կարևոր նշանակություն ունի փոխաբերական «քարտեզումը»², որը ենթադրում է հասկացությունների կառուցում և դրանց հասկացության համակարգման մեջ ներթափանցում (Lakoff & Johnson, 1980, էջ 257):

Համաձայն Ն. Մանդելբլիթի՝ թարգմանությունը ենթադրում է կայացած քարտեզման «զարթոնք» հասկացության համակարգում: Այսպես՝ հաշվի առնելով այն փաստը, որ փոխաբերությունը մտածողության տարր է, դրա թարգմանությունը կարող է իրականացվել ոչ միայն մեկ լեզվից մյուսը տեղափոխվելով, այլև աշխարհի մեկ հասկացությանացումից դեպի մյուսը անցում կատարելով (Mandelblit, 1995, էջ 486):

Հաշվի առնելով բոլոր վերոնշյալ մոտեցումները՝ կարելի է հետևություն անել առ այն, որ փոխաբերությունների թարգմանության իրականացման համար թարգմանչի համար կենսական անհրաժեշտություն է քայլերի հաջորդականության ձևավորումը, այսինքն՝ մեթոդաբանության սահմանումը, որն էլ հնարավորություն կտա առավել ձգճիտ կերպով աղբյուր-լեզվի փոխաբերությունը փոխանցել թիրախ-լեզու: Հաշվի առնելով վերոշարադրյալ բոլոր տեսությունները և մոտեցումները առաջարկում ենք փոխաբերությունների թարգմանության լեզվաձանաչողականորեն կողմնորոշված մեթոդաբանություն, որը բաղկացած է հետևյալ քայլերից.

1. աղբյուր-տեքստի փոխաբերությունների իմաստի թիրախավորում և հստակ ըմբռնում,
2. քննարկվող փոխաբերությունների հասկացության փոխազդեցական/ինտեգրացիոն մեխանիզմների ուսումնասիրություն (աղբյուր- և թիրախ-լեզուների հասկացության տիրույթների հետազոտում),
3. աղբյուր-տեքստի փոխաբերության թիրախ-լեզվով համարժեքների հայտնաբերում՝ պահպանելով գործառության և գեղագիտական հա-

2 Փոխաբերությունը ներդրային համակարգին հատուկ երևույթ է: Փոխաբերական քարտեզումը իրականացվում է ֆիզիկապես՝ ներդրային քարտեզման միջոցով: Դրանք իրենց բնույթով ներդրային մեխանիզմ են, որը ենթադրում է զգացայական-շարժողական միջամտություն՝ վերացական մտքում գործածման նպատակով: Առաջնային փոխաբերություններն առաջանում են անմիջապես և անկանխամտածված: (Lakoff & Johnson, 1980, էջ 257):

- մարժեքությունը թիրախ- և աղբյուր-լեզուների միջև,
4. հայտնաբերված փոխաբերությունների եզրագծում և շտկում՝ ձգտելով հնարավորինս պահպանել բնագրի գեղագիտական ազդեցությունը:

Վերը շարադրված մեթոդաբանության գործնական կիրառությունը առաջարկում ենք դիտարկել հետևյալ օրինակների վրա, որոնք վերցված են Ջեյ Լոնդոնի «Զսպաշապիկ» վեպից և դրա՝ Կ. Սիմոնյանի հայերեն թարգմանությունից:

*«You were then not fixed, not **crystallized**. You were **plastic, a soul in flux, a consciousness and an identity in the process of forming**—ay, of forming and forgetting».* (J. London, 1913, էջ 1)

«Այդ շրջանում դեռ չէր կազմավորվել, չէր **բյուրեղացել** քո անհատականությունը: Դու **կակուղ էիր մեղրամոմի նման, դեռ չէիր սպացել հասարակուն ձև**, քո գիտակցությունը դեռևս գտնվում էր ձևավորման ընթացքում...» (Ջ. Լոնդոն, 1970, էջ 7)

Անգլերեն տարբերակում ներկայացված «crystallized» (հայերեն՝ «բյուրեղացված»), «plastic» (հայերեն՝ «պլաստիկ»), «soul in flux» (բառացի՝ «հոգին հալանյութի մեջ») բառերն ու բառակապակցությունը կրում են փոխաբերական իմաստ՝ մատնանշելով մարդու կյանքի և հոգու սկզբնական վիճակը: Հայերեն տարբերակում տեսնում ենք «crystallized» բառի ուղղակի թարգմանություն, մինչդեռ վերաբերյալ մյուս բառերը անուղղակի են թարգմանվել: Կարելի է դատել, որ թարգմանիչն այս պարագայում առաջնորդվել է հայերեն բառերի կապակցելիության իմաստաբանական և ոճաբանական առանձնահատկություններով: Այս պարագայում թարգմանիչը, մասամբ պահպանելով բնագրի տեքստի իմաստաբանական ձգգրիտ համարժեքությունը թիրախ տեքստի հետ և արդեն իսկ թարգմանված տեքստը շտկելու նպատակով հաղորդելով վերջինիս առանձնահատուկ գեղագիտական պատկեր, կարողանում է հասնել թիրախ տեքստի ավարտուն, վերջնական տարբերակին, որն ամբողջովին համապատասխանում է թիրախ լեզվի գրական ժանրին պատկանող ստեղծագործություններին:

*«I have gone through **the hells of all existences** to bring you news which you will share with me in a casual comfortable hour over my printed page.»* (J. London, 1913, էջ 3)

«Դարձյալ **վերապրել եմ վաղեմի գոյության վշտերն ու փառապանքները**, որպեսզի քեզ գիտեիքներ քերեմ, որոնք ինձ հետ կկիսես՝ ազատ ժամերիդ անվրդով թերթելով գրքիս էջերը»: (Ջ. Լոնդոն, 1970, էջ 9-10)

Տվյալ օրինակում ներկայացված «hells of all existances» (բառացի՝ «բոլոր գոյությունների դժոխքը») բառակապակցությունը, որը փոխաբերաբար մատնանշում է «տանջալից կյանքի ընթացքում» իմաստը, հայերեն տարբերակում ներկայացված է «վերապրել եմ վաղեմի գոյության վշտերն ու տառապանքները»: Ակնհայտ է, որ այս դեպքում թարգմանիչն նման մոտեցումը պայմանավորված է վերջինիս կողմից տեքստի մեկնողական (հերմենևտիկ) վեր-

լուծությամբ: Մասնավորապես՝ տվյալ հատվածին նախորդող պարբերություններից մեկում նշված «I, whose lips had never lisped the word “king”, remembered that I had once been the son of a king» (J. London, 1913, էջ 2) («Իմ լեզուն դեռ ոչ մի անգամ չէր արտաբերել «արքա» բառը, իսկ ես հիշում էի, որ ժամանակին եղել եմ արքայազն») (Զ. Լոնդոն, 1970, էջ 9) նախադասությունը, ինչպես նաև վեպի զարգացման ընթացքում գլխավոր հերոսի տարբեր «անձերի» պատմությունները՝ ներկայացված հին ժամանակների իրադարձությունների լույսի ներքո, հնարավոր են դարձնում «վաղեմի գոյություն» բառակապակցության կիրառումը «existence» բառի և «վշտեր և տառապանքներ»՝ «hells» բառի բառացի թարգմանության փոխարեն: Այս դեպքում սույն աշխատանքում հիշատակվող փոխաբերությունների թարգմանության ինտեգրացված մեթոդին համաձայն՝ թարգմանիչը «hells of existence» բառակապակցության հասկացության լատուցվածքն ըմբռնելու համար դիմում է տեքստի հերմենևտիկ ուսումնասիրությանը, որի միջոցով հնարավոր է դառնում հասկանալ տվյալ համատեքստում ներկայացված բառիմաստը և, ներգրավելով հասկացության խառնուրդի մեթոդը (hells-վշտերն ու տառապանքներ, existence – վաղեմի գոյություն), ավարտուն է դարձնում թարգմանված փոխաբերությունը:

«And yet the state, which includes all the citizens of the state, believes that it can blot out this wisdom of mine in the final dark by means of a rope about my neck and the abruptive jerk of gravitation—this wisdom of mine that was incubated through the millenniums, and that was well-hatched ere the farmed fields of Troy were ever pastured by the flocks of nomad shepherds!» (J. London, 1913, էջ 6):

«Բայց և այնպես նահանգը, իր բոլոր քաղաքացիներով հանդերձ, հավատում է, որ կկարողանա ինձանից խլել այդ իմաստությունը՝ վզիս գցած օղակի և երկրի ձգողական օրենքի օգնությամբ ինձ ընկղմելով վերջնական խավարում, կկարողանա խլել այդ իմաստությունը, որ կույրակվել է իմ մեջ հազարամյակներ շարունակ և գուրգուրանքով աճել է դեռևս այն օրերին, երբ Տրոյայի մարգագետիններում դեռ չէին արածում քոչվոր անասնապահերի հոյրերը»: (Զ. Լոնդոն, 1970, էջ 13-14):

Ինչպես երևում է բերված օրինակում, «blot out» (բառացի՝ «ջնջել»), ինչպես նաև «by means of a rope and the abruptive jerk of gravitation» փոխաբերությունները հայերեն տարբերակում ներկայացված են հետևյալ կերպ՝ «blot out» – «խլել» և «abruptive jerk of gravitation» (բառացի՝ «ձգողականության կտրուկ ձգում») – «երկրի ձգողականության օրենք» տարբերակներով, որոնցից առաջինն անուղղակի կերպով է թարգմանված և ցուցաբերում է թարգմանչի անհատական ստեղծագործականությունը, և երկրորդը որոշակի զեղչմամբ, որը նույնպես արտացոլում է թարգմանչի անհատական ոճը: Ակնհայտ է, որ այս պարագայում թարգմանչին նման որոշումներ կայացնելուն դրդել է թիրախ-լեզվի իմաստաբանական-ոճաբանական կառուցվածքային առանձնահատկությունները:

*«At this stage I enter or, rather, I depart, for they took me away out of the sunshine and the light of day to the dungeons, and in the dungeons and in the solitary cells, out of the sunshine and the light of day, I **rotted** for five years». (J. London, 1913, էջ 15):*

«Հենց այդ իրադրության մեջ էլ ասպարեզում հայտնվում եմ ես. ավելի ճիշտ՝ հակառակը, հեռանում եմ ասպարեզից, քանի որ ինձ գրկում են Ասրժոտ փված լույսից ու արեգակնային ճառագայթների ճաճանչներից, և ներում են մենախուց: Եվ այս մենախուցում մեն-մենակ նստած, լույսից ու արևի ճառագայթներից զուրկ, հարկադրված եմ **փտելու** երկար ու ձիգ փարիների ընթացքում»: (Զ. Լոնդոն, 1970, էջ 24):

Այս տարբերակում «rot» փոխաբերությունը, որը մատնանշում «to rot in prison» (հայերեն՝ «փտել բանտում») դիտվում է և՛ թարգմանչի, և՛ հեղինակի հասկացության լատուցվածքների համապատասխանություն, որն իր հերթին պայմանավորված է աղբյուր- և թիրախ-լեզուների այս հասկացույթի կառուցվածքների նմանությամբ: Այս պարագայում բառացի թարգմանությունը ամբողջովին պատշաճ է և նպաստում է տեքստի ավարտուն գեղագիտական արժեքի ձևավորմանը:

*«All that day I lay in the dungeon **cudgelling my brains** for the reason of this new and inexplicable punishment». (J. London, 1913, էջ 17):*

«Ամբողջ օրը մենախուցում նստած **գլուխ էի կոտրում**՝ ջանալով հասկանալ, թե ինչի համար եմ արժանացել այդ նոր ու անիրավ պատժին»: (Զ. Լոնդոն, 1970, էջ 25):

Այս հատվածում տեսնում ենք «cudgeling my brains» (բառացի՝ «ծեծել ուղեղը»), որը հայերեն տեքստում ներկայացված է «գլուխ կոտրել» կայուն դարձվածով: Այդ ամենը պայմանավորված է հայերեն տարբերակի իմաստառձական առանձնահատկությամբ և վերոնշյալ բառակապակցության բառացի թարգմանության անհամատեղելիությամբ:

*«Day was only a little light, but it was better than the all-dark of the night. In solitary the day was **an ooze, a slimy seepage of light** from the bright outer world». (J. London, 1916, էջ 32):*

«Մեկուսարանում ցերեկը **լոկ մածուցիկ, դժգույն աղջամուղջ էր**, որը թափանցում էր դրսից, այնպեղից, ուր բերկրանքով փայլում էր արեգակնային լույսը»: (Զ. Լոնդոն, 2018, էջ 42)

Այս օրինակում «day was an ooze, slimy seepage of light» (բառացի՝ «ցերեկը լույսի մածուցիկ, լորձանման արտահոսք էր») նախադասությունը հայերեն տարբերակում ներկայացված է «ցերեկը լոկ մածուցիկ, դժգույն աղջամուղջ էր»: Ակնհայտ է, որ այս պարագայում թարգմանիչը փոխարինում է «seepage» բառի բառացի թարգմանությունը «աղջամուղջ» բառով, ինչը պայմանավորված է հայերեն տեքստի իմաստաբանական առանձնահատկությամբ:

Բառացի թարգմանության մասնակի պահպանման ուշագրավ օրինակ է հետևյալ հատվածը.

*«I now **cultivated sleep**. I made a science of it. I became able to sleep ten hours, then twelve hours, and, at last, as high as fourteen and fifteen*

hours out of the twenty-four». (J. London, 1916, էջ 32)

«Հիմա ես **քնի մշակույթով եմ զբաղվում**: Դրանից ես մի գիտություն եմ ստեղծել: Սովորեցի քնել տասը, հեղու տասներկու, և վերջապես, նույնիսկ տասնչորսից տասնհինգ ժամ՝ օրվա ընթացքում»: (Զ. Լոնդոն, 1970, էջ 43):

Տվյալ օրինակում «I now cultivated sleep» (բառացի՝ «ես հիմա մշակում եմ քունը») փոխաբերական իմաստ կրող բառակապակցությունը, որը մատնանշում է Դարբել Սթենդինգի՝ ինքնահիպնոզը, հայերեն տարբերակում արտացոլվել է որպես «Հիմա ես քնի մշակույթով եմ զբաղվում»: Ակնհայտ է, որ այս պարագայում թարգմանիչն իրականացրել է որոշակի ձևափոխումներ՝ ելնելով հայերենի ոճական առանձնահատկություններից:

Ներկայացված օրինակների հետազոտության արդյունքում պարզվում է, որ գրական երկի պատշաճ թարգմանությունն ուղղակիորեն կապված է բնագրում ներկայացված փոխաբերությունների՝ թարգմանչի կողմից լիարժեք ընկալելու և դրանք հնարավորինս ճշգրիտ թիրախ-լեզու փոխանցելու հետ: Փոխաբերությունների բարդ իմաստային կառուցվածքը դրդում է թարգմանչին կատարելու տեքստի մեկնողական ուսումնասիրություն, ինչպես նաև հաշվի առնելու քննարկվող հասկացությունների ճանաչողական նկարագրերը: Այս գործընթացների իրականացման արդյունքում թարգմանիչը կարողանում է թիրախ տեքստը լիարժեքորեն համահունչ դարձնել բնագրին:

Եզրակացություն

Փոխաբերությունների կիրառությունը գեղարվեստական ստեղծագործություններում նպաստում է հեղինակի պատկերավոր մտածողության ներկայացմանը: Փոխաբերությունները կարելի է քննարկել ոչ միայն լեզվաբանական հետազոտական եղանակներով, այլև, ուսումնասիրելով դրանց ճանաչողական բնագավառը, հասկանալու և վերլուծելու հեղինակի գրելաոճը և յուրօրինակ աշխարհընկալումը:

Թարգմանաբանության տեսանկյունից փոխաբերությունների ուսումնասիրությունը գրական տեքստերում մեծ կարևորություն ունի, քանի որ թույլ է տալիս թարգմանչին հնարավորինս ճշգրիտ համարժեքներ հայտնաբերել՝ թարգմանություն կատարելիս: Մեր համոզմամբ՝ այդ ամենի իրականացման հուսալիությունը մեծապես պայմանավորված է ինտեգրացված մեթոդաբանության կիրառմամբ, որը նախատեսում է տեքստի իմաստաբանական-լեզվաճանաչողաբանական վերլուծության և մեկնողական մոտեցման համադրում:

Զեկ Լոնդոնի «Զսպաշապիկ» վեպից դուրս բերած փոխաբերությունների թարգմանված տարբերակների համեմատական ուսումնասիրությունների արդյունքում պարզվում է, որ թարգմանչի համար մշակված մեթոդաբանությունը միանգամայն կիրառելի է պատշաճ թարգմանություն իրականացնելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

- Գասպարյան, Ս. (2015): Հերմենևտիկան որպես գեղարվեստական ստեղծագործության մեկնաբանության մեթոդաբանություն. *Բանասիրություն*, № 3 (18), Բանբեր Երևանի համալսարանի:
- Գասպարյան, Ս., Մաթևոսյան, Ա. (2018): *Տեքստ, փոխաբերություն, մեկնաբանություն*, ԵՊՀ հրատարակչություն, Երևան:
- Լոնդոն, Ջ. (1970). *Զուգաշաղկ. Միջասպրդային թափառականը* [թարգմ.՝ Կ. Սիմոնյան] // Երկերի ժողովածու, հատոր 10, Երևան, «Հայաստան» հրատ.:
- Аристотель (1983). *Поэтика*. Москва, Издательство «Мысль».
- Лагута, О. Н. (2009). *Метафорология: теоретические аспекты. Часть 1*. Новосиб. гос. ун-т. Новосибирск.
- Лагута, О. Н. (2009). *Метафорология: теоретические аспекты. Часть 2*. Новосиб. гос. ун-т. Новосибирск.
- Dagut, M., & Menachem, B. (1976). Can “Metaphor” be translated? *Babel*, 22(1), 21–33. Bowdle & Gentner <https://doi.org/10.1075/babel.22.1.05dag>
- Dancygier, B. (2014). Stylistics and blending. *The Routledge Handbook of Stylistics*. London and New York, Routledge Taylor & Francis Group.
- Lakoff, G., Johnson M. (1980). The Metaphorical Structure of the Human Conceptual System. *Cognitive Science*.
- Lakoff, G., Johnson, M. (1980). *Metaphors We Live By*. Chicago University Press.
- Lakoff, G., Núñez, R.E., (2000). *Where Mathematics Comes From, How the Embodied Mind Brings Mathematics into Being*. Basic Books.
- London, J. (1913). *The Star Rover*. London, UK: Macmillan & Co. Ltd.
- Mandelblit, N. (1995). The cognitive view of metaphor and its implications for translation theory. *Translation and Meaning, Part 3*, Maastricht, the Netherlands: Maastricht University Press.
- Pragglejaz group (2007). MIP: A Method for Identifying Metaphorically Used Words in Discourse. *Metaphor and Symbol*, 22(1), Lawrence Erlbaum Associates, Inc.
- Steen, G., Dorst, A, Herrmann, J, Kaal, A, Krennmayr, T. (2010) *A Method for Linguistic Metaphor Identification. From MIP to MIPVU*, John Benjamins Publishing Company, the Netherlands.

Нелли Саргсян*Магистр филологии,**аспирант Ереванского государственного университета**Эл. адрес: nelly.sargsyan@ysu.am*

ПРОБЛЕМА ПЕРЕВОДА МЕТАФОРЫ В ХУДОЖЕСТВЕННОЙ ЛИТЕРАТУРЕ (ОБЗОР РОМАНА ДЖ. ЛОНДОНА «МЕЖЗВЁЗДНЫЙ СКИТАЛЕЦ»)

Изучение метафор всегда вызывало большой интерес как у многих лингвистов, так и у исследователей из других областей науки. По своей сложной семантической структуре метафоры не только нацелены на насыщение образного языка и стиля произведения, но и являются элементами мышления, благодаря чему изучение писательского стиля становится возможным. В данной статье изучен ряд теорий, посвященных метафорам, совершена попытка дать оценку их значению в структуре художественного произведения, анализировать различные подходы к их переводу и выработать соответствующий метод. Материалом исследования являются содержащие метафорическое значение образцы, выписанные из романа Джека Лондона «Межзвёздный скиталец», и их эквиваленты на армянском, изъятые из армянского перевода, анализ которых констатирует тесную связь между успешным переводом и использованным переводчиком методом. Роль последнего чрезвычайно важна в процессе передачи смысла как общего, так и отдельных частей оригинального текста произведения.

Ключевые слова: метафора, перевод, когнитивистика, целевой язык, исходный язык, автор, переводчик, текст.

Nelli Sargsyan*Master of philology,**Ph.D. student at Yerevan State University**Email: nelly.sargsyan@ysu.am*

THE PROBLEM OF METAPHOR TRANSLATION IN VERBAL ART (REFERENCE TO THE NOVEL “THE STAR ROVER” BY J. LONDON)

The study of metaphors has always been within the scope of interest not only of linguists but also of researchers of other sciences. Metaphors by their complex semantic structure are aimed at enriching imaginary language and style of a literary work. They are elements which express the way of thinking and thereby make it possible to study the author's writing style. In the present research a number of theories dedicated to metaphors are explored, an attempt to assess their significance within the structure of literary work, to analyze various ap-

proaches to metaphor translation and to work out a corresponding methodology is carried out. The object of the research are numerous examples containing metaphorical meaning which are taken out from Jack London's novel "The Star Rover" and their corresponding Armenian equivalents from the translation in Armenian. After careful analysis of the mentioned examples a close connection between the successful translation and the methodology applied by the translator was found. The role of the mentioned methodology is highly important for the process of conveyance of both separate parts and the global sense of the original work of literature.

Key words: metaphor, translation, cognition, target-language, source-language, author, translator, text.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. մարտի 4-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. մարտի 13-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. հունիսի 11-ին: